# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՅՑԵԼԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Մարտի 3-ին Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, թեմի եկեղեցականների և Ռուսաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան փիար Արմեն Սմբատյանի ուղեկցությամբ այցելեց Մոսկվայի Ս. Հարություն հայկական եկեղեցի:

Վեհափառ Հայրապետը փառք և գոհություն վերառաքեց Երկնավոր Տիրոջը՝ հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության, երկու երկրների խաղաղ և ապահով առաջընթացի, երկու Եկեղեցիների պայծառության համար:

Աղոթքից հետո Նորին Սրբությունն իր գնահատանքի խոսքն ուղղեց թեմակալ առաջնորդին, թեմի սպասավորներին և ներկա բազում հայորդիներին այն նախանձախնդրության համար, որ դրսևորում են հայապահպանության, հայոց հավատի և ազգային կյանքի զորացման սրբազան առաքելության իրականացման գործում:

«Ձեր քայլերը ուղղեք դեպի այս եկեղեցին, որ դարեր շարունակ իր կամարների ներքո համախմբել է մեր ժողովրդի զավակներին, նրանց կրթել և սնել ազգային և հոգևոր արժեքներով: Այստեղ նրանք զորացել են, այստեղ նրանք ճանաչել են իրենց ինքնությունը, ճանաչել Աստծուն և Աստծո հետ իրենց ուխտը կնքել»,- հորդորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մաղթելով Ռուսաստանի օրհնյալ հողում բնակվող հայորդիներին անհողդողդ մնալ եկեղեցասիրության և հայրենանվիրումի մեջ: Վեհափառ Հայրապետը պատգամեց նրանց՝ շարունակել իրենց ընթացքն Աստծո պատվիրանների մեջ, որպեսզի իրենց կյանքը շարունակի լինել հավատքի, մեր ազգային կյանքի հաղթական ընթացք:

Նույն օրը Նորին Սրբությունն այցելեց նաև Մոսկվայում կառուցվող Ս. Խաչ եկեղեցի, ծանոթացավ շինարարական աշխատանքների ընթացքին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*